

ՀՐ. ԱՃԱՌԵԱՆԻ ԱՅՐԻՆ ԿԸ ԳՐԷ

ՎԵՆԵՏԻԿԻ ՄԵԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԱԲԲԱՀԱՅՐ

ԳԵՐՅԱՐԳԵԼԻ ՀՄԱՅՆԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԵՏԻԿԵԱՆԻՆ

ՎԵՆԵՏԻԿԻ

Այն վստահութեամբ, որ Ձեր հայադիտական օգտաշատ հանդէսի՝ «Բազմալէզ»-ի խմբագրութեան եւ նրա ընթերցողների հետաքրքրութիւնը չի դադարի հին ու վաղեմի աշխատակից ամուսնու՝ հայալէզ-լեզուարան Հ. Աճառեանի տպագրութեամբ եւ անտիպ գրական ժառանգութեան հանդէպ, ուղարկում եմ Ձեզ Հայկական ՍՍՀ գրողների միութեան պաշտօնաթերթ «Գրական թերթ»-ի 1968 թուականի Փետրուարի 23-ի Տրդ համարում լոյս տեսած «Անառեանի «Կեանքի» յուշերից» հատորը եւ հեղինակի անտիպ ժառանգութեանը յօդուածիս կտրոնը, յայտնելով իմ ջերմ ցանկութիւնը այն արտատպութեամբ տեսնելու Ձեր հանդէսի մէջ, հասցնելու համար նրա բովանդակութիւնը սիրելիքս մտաւորականների ուղարկութեանը, որովհետեւ այն չօգտւում է հայադիտութեան մեծ երախտաւորի կեանքին եւ անտիպ ժառանգութեանը վերաբերող հարցեր: Յօդուածիս արտատպութեամբ յատկապէս ցանկալի պիտի լինէր նաեւ Աճառեանի սիրելիքս մտաւորականների ուղղած եւ կամ նրանցից ստացած նամակների պատճենների հաւաքման գործի կապակցութեամբ, դրանք միացնելու համար Աճառեանի «Կեանքի» յուշերից» հատորի շարունակութիւնը կազմող եւ պատրաստութեան ընթացքի մէջ եղող իմ յուշագրական հատորին:

Հեռուոր երկիրների տակ, Միխիթարեան քոյր միարանութիւնները, շարունակելով Միխիթար Աբրահամ եւ Հ. Դ. Ալիշանի գործը, անգնահատելի ծառայութիւն են մատուցել հայ մշակութիւն եւ հայադիտութեան ծաղկմանը: Ի սրտէ ցանկանում եմ Ձեզ ոյժ եւ կարողութիւն՝ Միարանութիւնը միշտ իր բարձրութեան վրայ պահելու համար: Այսօր ուրախ էք բնականաբար մեզ հետ նաեւ Դուք, որ Հայրենիքը ծաղկում, աճում է եւ բարգաւաճում բոլոր բնագաւառներում եւ գտնում կենտրոն:

Թոյլ տուէ՛ք նաեւ խնդրել, որ յօդուածս արտատպուելու դէպքում բարի լինէ՛ք կարգադրել, որ տուեալ համարից ինձ ուղարկուելի մէկ-երկու օրինակ:

Իմ կանխադատ շնորհակալութիւնների հետ, հաճեցէ՛ք ընդունել նաեւ իմ խորին յարգանքները:

Նրեան

27 Փետրուարի 1968 թ.

ՍՈՖԻԱ ԱՃԱՌԵԱՆ

ԱՃԱՌԵԱՆԻ «ԿԵԱՆՔԻՍ ՅՈՒՇԵՐԻՅ» ՀԱՏՈՐԸ

ԵՒ ՀԵՂԻՆԱԿԻ ԱՆՏԻՊ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

Երեւանի Պետական Համալսարանի «Միտք» հրատարակչութիւնը 1967 թուականին լոյս ընծայեց իմ ամուսնու՝ Հրաչեայ Աճառեանի «Կեանքի» յուշերից» հատորը:

Յուշագրական այս աշխատութիւնը արժանացաւ ընթերցող լայն հասարակարժանութեան ուղարկութեանը: Հատորին նուիրեալ նուիրեցին Էդ. Շահիր-գրախօսականներ նուիրեցին Էդ. Շահիր-եանը («Սովետական Հայաստան» օրաթերթ, 21 Դեկտեմբերի 1967) եւ բանասիրական գիտութիւնների դոկտոր Ալ. Մարգարեանը («Երեկոյան Երեւան», 27 Դեկտեմբերի 1967): Գրախօսականներ են լոյս տեսել նաեւ սիրելիքս մամուլում: Գրախօսներն իրենց գնահատանքի խօսքն ասացին, չմոռալով անել նաեւ փոքր զիտողութիւններ՝ դրքի խմբագրական եւ սրբագրական աշխատանքների մասին: Բացի այդ, ամէն կողմից, հայրենիքից թէ սիրելիքս, նամակներով, հեռախօսով կամ անձամբ, ինձ ուղղուեցին հարցեր, որոնց ցանկանում եմ գոհացում տալ:

Կարելոյ եմ համարում անդրադառնալ նաեւ Աճառեանի տպագրութեամբ եւ անտիպ մի շարք աշխատութիւններին եւ ձեռագիր ժառանգութեանը:

Հր. Աճառեանը, ինչպէս յիշում է «Կեանքի» յուշերից» հատորի առաջաբանում, վաղուց նպատակ ունէր գրի առնել իր յուշերը, սակայն ծանրաբեռնութեամբ լինելով վիտական եւ գոտախօսական աշխատանքներով, ժամանակ չէր գտնում այդ խնդիրն իրականացնելու: Օրուայ մեծ մասը նա աշխատում էր առանց հանգստի՝ նուազագոյնի հասցնելով անդամ քնի համար անհրաժեշտ ժամանակը: Վերջապէս 1952 թուականին,

հիւանդութեան ժամանակ, իր միամտեայ պարտադիր «հանդիստը» նա նուիրեց յուշերը գրի առնելուն: Տեսողութեան տկարութեան պատճառով, ինչպէս նշում է յուշերի խմբագիր պրոֆ. Էդ. Աղալեանը, նրա թելադրածը գրի էին առնում «Բ. Աճառեանը, ասպիրանտներ Գ. Գարեգինեանը, Լ. Պետրոսեանը եւ ուսանող Ա. Գալաշեանը»: Յուշերի գրառմանը մասնակցել է նաեւ ուսանող Ա. Տէր-Ղեւոնդեանը, որի անունը չի յիշատակուել: Յուսով ենք, որ վերջինս իր ուսուցչի յիշատակի առաջ ներդրած իր կը լինի այս թիւրիմացութեան համար:

Աճառեանը գրի առնում յուշերը վերանայելու, ուղղումների, լրացումների կատարելու հնարաւորութիւն չունեցաւ, անդամ չտեսաւ գրի առնումը: Ինքնին արդէն հասկանալի են դառնում այն մի շարք մանր թերութիւնները, որ նկատու են գրախօսները եւ շատ ընթերցողներ: Ինչ վերաբերում է վերադրումներին, ապա պէտք է անկեղծօրէն ասել, որ այս հարցում չեն կարող արդարանալ դրքի սրբագրիչներ Հ. Վարդանեանը եւ Մ. Մեհրաբեանը:

«Կեանքի» յուշերից» հատորը ընդգրկում է Աճառեանի միայն նախատվետական շրջանի կեանքի պատմութիւնը: Նոյնքան հարուստ, հետաքրքրական եւ ուսանելի է նաեւ նրա կեանքի երկրորդ կէտի պատմութիւնը Սովետական Հայաստանում: «Միայն կարելի է ցաւել, — վերջացնում է իր գրախօսականը Ալ. Մարգարեանը, — որ մահը թոյլ չտուեց Աճառեանին գրելու նաեւ իր կեանքի յետագայ տարիների պատմութիւնը, որը, սակայն, անպայման պէտք է անեն ուրիշները»:

Եւ ձեռնարկել եւս գրի տունել իմ յուշերը, որոնք մի տեսակ բաղկացուցիչ մասն ու շարունակութիւնը կը կազմեն Աճառեանի յուշերի: Աճառեանը չէր սիրում խօսել իր մասին: Իմ յուշերում, սակայն, ես կը խօսեմ Աճառեանի, նրա շրջապատի, հին ու նոր բարեկամների հետ նրա հանդիպումների, հետաքրքրական խօսակցութիւնների ու տեսակցութիւնների, ուսանողների եւ ասպիրանտների նկատմամբ նրա քաջալերող վերաբերմունքի մասին:

Երեսայի պարզութեամբ ու անմեղութեամբ այդ մարդու կեանքում թունաւորող երեւոյթները, դժբախտարար, անպակաս եղան: Անհատի պաշտամունքի մօայլ ժամանակաշրջանում՝ նա եւս տուժեց որպէս անմեղ զոհ եւ ազատագրուեց երեք տարով: Իմ յուշերում տեղ կը դրոնեն այդ ժամանակահատուածում Աճառեանի կրած տառապանքների ու դառնութիւնների, բանտում ունեցած մեր հանդիպումների նկարագրութիւնը եւ բախտակից իր ընկերների պատմածներն ու յիշողութիւնները նրա մասին:

Ես կը ջանամ բացայայտել Աճառեանի բնավորութեան, խառնուածքի իւրայատուկ, երբեմն նոյնիսկ տարօրինակ թրւացող, բայց իրենց բացատրութիւնն ունեցող կողմերը:

Ուշադրութեան արժանի եւ ուսանելի շատ բան ունի Աճառեանի աշխատասիրութիւնը, տակունութիւնը, նրա աշխատանքի դիտականօրէն կազմակերպուած սխառմը, որով նա կարողացել է լինել այնքան բեղունոր:

Աճառեանի կեանքով ու դիտական ժառանգութեամբ հետաքրքրուողների համար ես ունեմ մի այլ նորութիւն եւս: Հաւաքում եմ մեծ հայադէտի նամակները, կազմելու համար նրա նամակներն, որը հաւանաբար, իրեւ լրացուցիչ մաս, կը միացուի յուշերի իմ հատորին: Դրժբախտարար, Աճառեանը չունի իր թղթակցութիւնների կանոնաւոր, ամբողջական արխիւը: Դա բացատրւում է առաւելագոյն այն տխուր իրողութեամբ,

որ Աճառեանը անհատի պաշտամունքի տարիներին խուսափում էր լայն թղթակցական կապեր պահպանելուց: Այդ տարիներին նա նոյնիսկ վառեց, անհետ փրչացրեց կարեւոր բաղմամբիւ թղթակցութիւններ ու նամակներ: Աճառեանի գրած եւ ստացած նամակները, սակայն, լոկ կենցաղային հարցերի, անձնական փոխյարաբերութիւնների արտայայտութիւն չեն, այլ առաւելագոյն արտացոլում են դիտական մտահոգութիւններ:

Այս առաջադրանքը կատարելու նպատակով Աճառեանի ինձ յայտնի թղթակցներից ես խնդրել եմ ուղարկել իրենց թղթակցութիւնների բնագրերը կամ պատճենահանումները, եւ իմ ջանքերն արդէն տուել են որոշ արդիւնքներ: Այսպէս, Ամերիկայի Միացեալ Նահանգներից հայ մտաւորական Միհրդատ Թիրեաքեանը (իրանագէտ դոկտ. Յարութիւն Թիրեաքեանի որդին) ուղարկել է իր եւ հանդուցեալ հօր հետ Աճառեանի ունեցած թղթակցութիւնների պատճենահանումները: Նամակների պատճենահանումներ են ստացուել նաեւ ամերիկահայ մտաւորական Կարոյ Գաղաղեանից: Վստահ եմ, որ շուտով ստացուող նիւթերի թիւը կը բազմապատկուի:

Առիթից օգտուելով, ես պիտի խնդրէի, որ բոլոր նրանք, ովքեր թղթակցել են Աճառեանի հետ, բարի լինեն ինձ ուղարկել այդ թղթակցութիւնների բնագրերը կամ գոնէ նրանց պատճենահանումները: Վստահ լինելով, որ խնդրանքս տեղ կը հասնի, նախօրօք յայտնում եմ իմ չնորհակալութիւնը բոլոր նրանց, ովքեր իրենց օժանդակութիւնը կը բերեն այս գործին:

Ինձ մօտ եղած բոլոր ձեռագրերը պահւում են մեծ խնամքով: Դրանց մի մասն արդէն հրատարակուած աշխատութիւնների բնագրերն են, որոնց դիտական եւ թանգարանային արժէքը, անշուշտ, մընայուն է: Բայց հայրենի եւ, առաւելագոյն, ամիւրոյն մամուլում տպագրուած շատ աշխատութիւնների բնագրերը չկան արխիւում: Մեծապէս ցանկալի կը

լինէր հաւաքել եւ ամփոփել ցրուած այդ բոլոր ձեռագրերը, կազմել Աճառեանի լրիւ արխիւը: Այս նպատակով ես արդէն թղթակցութիւններ եմ վարում:

Աճառեանի ձեռագրերի մէջ գեոեւս կան մի շարք կարեւոր անտիպ աշխատութիւններ:

Ուրախ եմ յայտնելու, որ Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի նախագահ Վ. Համբարձումեանի հրամանով նշանակուել է յատուկ յանձնաժողով, որի կազմի մէջ մտնում են ակադեմիկոս Ա. Ա. Ղաւրիբեանը (յանձնաժողովի նախագահ), Ակադեմիայի թղթակցի-անդամ Էդ. Աղայեանը, բանասիրական դիտութիւնների թեկնածու Գ. Ստեփանեանը եւ ես: Յանձնաժողովը 1968 թուականի Յունուարի 8-ի իր նիստում, ծանօթանալով ակադեմիկոս Հր. Աճառեանի անտիպ աշխատութիւնների վիճակին, դուաւ միանգամայն աւարտուած եւ հրատարակութեան համար հեշտութեամբ պատրաստելի նրա մի շարք գործերը:

Այդ աշխատութիւնների մէջ առանձնապէս արժէքաւոր է հայադիտական բնոյթի (բայց ոչ նեղ մասնագիտական-լեզուագիտական) «Ժողովածու պոլսահայ անգիր բանահիւսութեան», որտեղ Աճառեանը հաւաքել է Պոլսի հայկական բանահիւսութիւնը՝ առակներ, առածներ, ասացումներ, օրհնութիւններ, անէծքներ, հանելուկներ, հեքիաթներ, գրի է առել պոլսահայերի սովորութիւնները, նիստուկացը եւ այլն: Այս գործի հրատարակութիւնը կարեւոր աւանդ կը հանդիսանայ հայ բանահիւսական, ազգագրական դրականութեան դանձարանում, կը փրկի ժամանակի եւ իրադարձութիւնների բերումով կորստեան մատնուած թանկարժէք դանձերը:

Մեծ արժէք է ներկայացնում «Պատմութիւն հայոց գաղթականութեան» աշխատութիւնը: Նա այստեղ ներդրել է ազգութեամբ հայերի իր ողջ հմտութիւնը, օգ-

տուել է ոչ միայն մեր պատմիչների տրւած տեղեկութիւններից, այլեւ պարբերական մամուլից եւ բանաւոր աղբիւրներից: Իւրաքանչիւր գլխի հետ անհրաժեշտ աղբիւրների ցանկը տալուց բացի, հեղինակը աշխատութեանը կցել է նաեւ առանձին մատենագիտական ցանկ: Ինչպէս յիշում է առաջաբանում, օգտագործուած աղբիւրների թիւը հասնում է մի քանի հազարի:

Իւրատեսակ եւ խիստ շահեկան աշխատութիւն է «Հայոց պատմութիւն» հիւսուած ընդհանուր պատմութեան հետ: Ինչպէս երեւում է խորագրից, այստեղ հայոց պատմութիւնը տրւում է մարդկութեան հետ միահիւսուած: Զուգահեռաբար շարագրելով աշխարհի այլեւայլ մասերում զարգացող քաղաքակրթական ու քաղաքական իրադարձութիւնները, Աճառեանը հայ ժողովրդի պատմութիւնը հասցնում է մինչեւ սովետական կարգերի հաստատումը: Այս գործի համար եւս օգտագործուել են ոչ միայն հայ, այլեւ օտար բաղմամբիւ միջազգային հեղինակութիւն ու ճանաչում դուած դիտականների աշխատութիւններ, հանրագիտականներ եւ այլն: Աշխատութիւնն օգտակար է ոչ միայն պատմութեան մասնագէտների, այլեւ հասարակ ընթերցողների համար:

Բրտնաջան աշխատանքի արդիւնք է նաեւ «Հայարձան»ը, որն ընդգրկում է «Հայոց բոլոր արձանագրութիւնները՝ հնագոյն շրջանից մինչեւ 1550 թուականը»՝ վիմագիր թէ գրաւոր աղբիւրներում հաղորդուած: Վիմագիր արձանագրութիւնների մէջ կան եւ այնպիսիները, որոնք Աճառեանն անձամբ ինքն է վերծանել տեղում կամ էլ վերծանել տուել ծանօթ մտաւորականների: Արձանագրութիւնների այսքան ճոխ հաւաքածուի հրատարակութիւնը կարող է մեծ օգուտ բերել հայադիտութեան բոլոր բնագաւառներին:

Հրատարակութեան համար պատրաստ գործերի մէջ են նաեւ «Քննութիւն Կիլիկիայի բարբառի» (զուգահեռաբար քրն-

նութեան են առնուած յատկապէս Զէյթունի եւ Հաճընի քոյր բարրառները), «Քննութիւն Սուեդիայի բարբառի» (հիմք է ընդունուել առաւելապէս Հաջի-Հարիրիի գիւղի բարբառը), «Պարսից լեզուի պատմութիւն»ը, «Հայոց նոր գրականութեան պատմութիւն»ը, «Հայ հին մատենագրութեան պատմութիւն»ը (ընդգրկում է Ե-ԺԵ դարերի եւ պատրաստուած է որպէս ուսումնական ձեռնարկ միջնագրական հայկական բնագրերի) եւ Սաադիի «Գիւլիստան»ը եւ «Օմար Խայեամ»ը (Թարգմանութիւն պարսկերէնից) :

«Հայոց լեզուի լիակատար քերականութեան» 7րդ, վերջին հատորի նիւթերը՝ նուիրուած բառաքնութեանը, իմաստաբանութեանն ու շարահիւսութեանը, խմբագրի կողմից արդէն պատրաստուած են հրատարակութեան :

Յիշուած աշխատութիւններից բացի, յանձնաժողովը գտաւ, որ «Բառարանագիտութիւն» աշխատութեան մէջ «եղած նիւթերը արժէքաւոր են եւ կարող են նոյնպէս հրատարակուել» : Այս դործում, բառարանագիտութեան շուրջ ընդհանուր տեսութիւնից եւ հայ ձեռագրի բառարանական աշխատութիւնների մասին ընդհանուր ակնարկից յետոյ, Աճառեանը հակիրճ կերպով քննութեան է առնում իր ձեռքի տակ ունեցած հայկական բառարանները (հայերէնից հայերէն, հայերէնից օտար լեզուներ եւ օտար լեզուներից հայերէն), տալով նրանց գնահատականները :

Աճառեանը հայագիտական հարցերի շուրջ «Հայկական» վերնագրով մի շարք յօդուածներ է հրատարակել պարբերական մամուլում : Յանձնաժողովը գտնում է, որ այդ բոլորը, նոյն ընդհանուր խորագրի տակ, մի հատորում հրատարակելը «Հայագիտութեան համար կը հանդիսանայ զարգացման խթան» :

Աճառեանի «Արմատական բառարան»ը, որը ոչ միայն հայոց լեզուի, այլ նաեւ ընդհանուր լեզուաբանութեան համար համարուել է իր տեսակի մէջ եզակի գործ, ժամանակին միջոցների սղութեան

պատճառով հրատարակուել է ասպակետիկ եւ խիստ սահմանափակ տպաքանակով : Այդ աշխատութիւնը վաղուց բացառուած է, եւ նրա պահանջը զգալի է : Յանձնաժողովը գտնում է, որ պէտք է ձեռնարկել գրա վերահրատարակութեանը :

Արխիւում եղած «Հայոց տեղանունների բառարան»ը արժէքաւոր, բայց անաւարտ ու մշակելի գործ է :

Աճառեանի անտիպ աշխատութիւնների վիճակը քննող յանձնաժողովն իր արձանագրութիւնը, որի գլխաւոր կէտերը յիշեցինք քաղուածաբար, եզրափակում է հետեւեալ տողերով. «Արձանագրութեան մէջ նշուած բոլոր աշխատութիւնները մեծ արժէք ունեն եւ նրանց տպագրութիւնը հասարակական-գիտական անհրաժեշտութիւն է, քանի որ արտայայտում են մեծ հայագէտի բազմաթիւ հայագիտական հետազոտական եզրակացութիւնները» :

Աճառեանը շատ էր ցանկանում կենդանութեան օրօք տպագրուած տեսնել զէթ իր գլխաւոր գործերը : Նրա ցանկութիւնը, աւա՛ղ, լրիւ չիրականացաւ : Այժմ ես, իրրեւ նրա «Կեանքի վերջալոյսի հաւատարիմ ընկեր եւ բախտակից», ունեմ նոյն այդ ցանկութիւնը : Յուսով եմ, որ կ'աւարտեմ յուշերը եւ դրանց, իրրեւ լրացուցիչ մաս, կը միացնեմ Աճառեանի նամականին. իսկ Ակադեմիայի Նախագահի վերահսկողութեան տակ, Աճառեանի անտիպ գործերի հրատարակութեամբ զբաղուող յանձնաժողովը արդիւնաւէտ կերպով կը կատարի իր առաջադրանքը, եւ կեանքին հրաժեշտ տալուց առաջ՝ բախտ կ'ունենամ նրա կարեւոր աշխատութիւնները հրատարակուած տեսնելու :

ՍՈՖԻԱ ԱՃԱՌԵԱՆ

Հասցէս՝

Mme. Sofia Adjarian

Avenue Lénine, N° 99

3^e étage, 7^e appartement

ERIVAN 9, ARMENIE, URSS

Ս. ՂԱԶԱՐԻ ԴԻԻԱՆԷՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ՀՐ. ԱՃԱՌԵԱՆԷՆ

1

Երեւան, 9 յունիւլ. 1924

Գերապատիւ Հայր խմբագրապետ (Հ. Ղազար Տայեան)
Բազմալեզու ազգագրական հանդիսի

Երեք եւ կէս ամիս է որ եկած եմ Երեւան եւ կապաւորուած եմ համալսարանին մէջ՝ դասախօսելով հայ լեզուաբանութիւն եւ պարսկերէն 120 ուսանողներու : Գրեթէ երեք ամիս առաջ ձեզի բաւական մանրամասն նամակ մը գրած էի, զոր ուղարկած էի մասնաւոր մարդու մը ձեռքով՝ որ Պերլինէն հոս պատուիրակ եկած էր եւ ետ կղանար : Կերեւայ թէ անիոյթ գտնուած է : Վերջին օրերս «Նարիքայի» Հայաստանի խմբագրութենէն ինձ տուին «Բազմալեզու» Սեպտեմբրի, որ ի մէջ այլոց եւ ձեր երկտողը կարգացի : Իմ կանոնաւոր հասցէս է՝

Via Moscou
H. Adjarian
Université arm.

Erivan (Arménie)

Զմոռնալ զրեւ նոյնը նաեւ հայերէն, որովհետեւ երկրին պաշտօնական լեզուն հայերէն է եւ ցրուիչը աւելի դիւրութեամբ կրերէ հայերէնով :

Թաւրիդէն առանձին գրքոյկ մը զրկած էի հրատարակուելու համար Բազմալեզուի մէջ, անշուշտ հասած է ձեռքերնիդ. նոյնպէս եւ նոր բառերու շարունակութիւնը, սկսեալ ճրգ թիւէն (inclusive-ment) . Բազմալեզու տեսած չեմ եւ հոս ալ չկայ որ կարգամ : Անշուշտ յաջորդ անգամ ուղարկելիք թերթերուն հետ կհաճիք կցել նաեւ նոր բառերու արտաստութենէն միայն մէկ օրինակ՝ սկսեալ 81րդ էջէն : Խմբագրութիւնդ երկու անգամ բառերուն տակ ծանօթութիւններ գրած էր, ատոնք շատ ճիշտ դտայ եւ կխնդրեմ որ ատոնք ալ արտաստութեան մէջ մտցուին, եթէ ոչ՝ յետոյ, վերջաբանի մը մէջ միտք ունիմ բոլորը հաւաքելու : Ընդամենը մնացեր է 6 գլուխ, որով նոր բառերս կաւարտին բոլորովին : Այդ վեց գլուխը միասին կը ընկնէ աւելի ուշ, երբ նամակիս պատասխանը ստանամ : Կըսուի թէ Եւրոպայի փոստը ընդ ամէնը 2 շաբաթ կտեւէ : Կխնդրէի որ զրքիս Ս. հատորէն օրինակ մը զրկէիք Meillet հայագէտին, որուն հասցէն է՝

Mr. A. Meillet
2 Rue François - Coppée
Paris XV